Նախագծային աշխատանքի ընթացքը

Դաս 1 8.11.2023

Ուսուցիչն առաջարկում է թեմաներ,մանրամասնորեն բացատրում կատարվող աշխատանքի կառուցվածքը՝ընթացք,ժամանակահատված,խմբային աշխատանք կատարելու էթիկա։Աշակերտներն առաջարկված թեմաներից ընտրեցին «Հովհաննես Թումանյան բանաստեղծը և մտածողը» թեման։Լսեցին կատարվելիք աշխատանքի վերաբերյալ ուսուցչի բացատրությունները,կատարվեց պարզաբանում անհասկանալի թվացող,ենթադրելի խնդիրների վերաբերյալ:

Դաս 2 25.11.2023

Այս դասին ներկայացվում է նախագծի հիմնախնդիրը՝բացահայտել Շիրազ բանաստեղծին և մտածողին,պարզել,թե որքանով է արդիական Շիրազի պոեզիան:Մասնակիցները բաժանվում են երեքական խմբերի։Կատարվում է աշխատանքի բաժանում:

Խումբ 1

Ներկայացնել Շիրազ բանաստեղծին և մտածողին՝օգտվելով առավելապես Շիրազի <<Մի փետուր իմ արծիվ կյանքից>>գրքից։Ներկայացբել Շիրազի ծննդավայր Գյումրին,ծննդավայրի ազդեցությունը Շիրազի՝որպես անհատ ձևավորվելու,ինչպես նաև ստեղծագործության վրա:Ներկայացնել Շիրազին՝որպես ժողովրդական բանաստեղծ,պարզել Շիրազի պոեզիայի արդիականությունը:Ներկայացնել բեմականացված հարցազրույց Շիրազ բանաստեղծի և անհատի միջև:

Խումբ 2

Ներկայացնել Շիրազին՝որպես մայրապաշտ բանաստեղծ , <<Հուշարձան մայրիկիս>> ժողովածուից դուրս գրել հեղինակային նորաբանություններ,պատրաստել սահիկաշար:

Խումբ 3

Ներկայացնել Շիրազին՝որպես մասիսապաշտ հայ,ներկայացնել <<Էքսպրոմտ>> բանաստեղծության ստեղծման պատմությունը,պատրաստել պաստառ:
Բոլոր մասնակիցները կներկայացնեն ասույթներ Շիրազի մասին:

Դաս 3 22.11.2023

Ուսուցիչը հետևում է կատարվող աշխատանքին,ուղղորդում գրականագիտական աղբյուրների որոնման և նոր գիտելիքների ձեռբերման հարցում։Աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը,կարևորում հիմնական ասելիքը

Դաս 4 29.11.2023

Ուսուցիչը կատարում է դիտարկումներ,կատարում շտկումներ,աշակերտներին օգնում խորհուրդներով,նախապատրաստում նախագծի պաշտպանությանը:

Դաս 5 6.12.23

Սա նախածի պաշտպանության օրն է։Աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը,մեկնաբանում,թե ինչ տվեց նախագիծն իրենց: